

Ղառ ընդ բեռամբ կենաց , որդեակ իմ , ընկճեցար վաղամեռիկ ,
Ո՛րնչ զորրանաւ քով կայր երկիր յուզեալ ի յոյս եւ ի նախանձ :
Եւ արդ . եւ Տէր իսկ քոյին , թէպէտ անվիշտ ելով բնութիւն ,
Եւ չէ հանգոյն քեզ վըշտամբեր , եւ արքունի ցուպ ի յաջում՝
Վո՛ւ պէս փըշովք պըսակեցաւ , , ,

ՎԻԿՏՈՐ ՀԻԻԿՈՅ

ՀՆԱԽՈՍՈՒԹԻՒՆ

Պատգամք :

Հին ազգաց պատմութեան պարա-
պող անձ մը անհրաժեշտ պէտք է գիտ-
նայ թէ ի՞նչ են պատգամները ու ի՞նչ
կերպով կամ հնարագիտութեամբ կ'ը-
լուէին , որով քրմաց ստապատիր խա-
բէութիւնը իմանալով՝ չէ թէ միայն
այն հիներէն պատմութեամբ բաներուն
հաւատք չընծայէ , այլ նաեւ հասուն
մտքով ու քննադատութեամբ արժա-
նաւոր դատաստան մը կարենայ ընել
այն արդի բանասէրներուն վրայ , ո-
րոնք որ բռնկած երեւակայութեամբ
մը , կամ լաւ եւս ըսենք շատ անգամ՝
ճշմարիտ կրօնից արատ մը բերելու ջան-
քով՝ նոյն կշիռն ու արժէքը կու տան
հեթանոսական ու աստուածային ստոյգ
և աներկբայելի պատգամաց միանգա-
մայն , որպէս զի սուտին ստույգութեամբը
ճշմարիտը սուտ հանեն , և տգէտներն
իրենց խաբէութեան ծուղակը ձգեն :
Սակայն ի՞նչ համեմատութիւն կայ ար-
դեօք մէկ կողմանէ անանկ ջնջին նիւ-
թերու և մարդկային յաջողութեանց
ու բաղդի համար եղած պատգամնե-
րու , և մէկալ կողմանէ աստուածային ,
վսեմ և մարդուս փրկութեանը համար
տրուած անշահասէր պատգամներու
մէջ . բայց որովհետեւ աս տեսակ բա-
ներու մէջ փաստերէ աւելի , կամ զոնէ
անոնց հաւասար , զօրութիւն մը կրնան
ունենալ պատմական ստոյգ տեղեկու-
թիւնները , անոր համար մենք ալ այս
մասս միայն կը կատարենք՝ ապահով
ըլլալով որ իմաստուն ընթերցողը հե-
թանոսականաց ստույգութիւնն իմանալու

ատեն ճշմարիտ և աստուածային պատ-
գամաց սրբազան ըլլալուն ինքիրմէ կը
համոզուի . և ահա այս տեսութեամբ
կը սկսինք մեր աս համառօտ տեղեկու-
թիւնը :

Յոնդրնէլ մատենագիրը իր Պատ-
գամաց Պատմութեան գիրքին մէջ ,
ուսկից մեծաւ մասամբ այս հատուածս
առած ենք , ամենայն կերպով կը ջանայ
ցուցնել՝ թէ ամենայն տեսակ պատ-
գամները հեթանոս քրմաց հնարագի-
տութենէն ու խորամանկութենէն ա-
ռաջ կու գային , և ոչ եթէ սատանա-
ներէն , որոնք Վրիստոսի աշխարհք
գալէն վերջն ալ չգաղղեցան : Յայտնի
է ի հաւատոց թէ սատանաներ կան ,
որոնց Սուրբ Վիրքը շատ տեղ այս չար ,
այսոյ չարաց ալ կ'ըսէ , որոնք յաւիտենա-
կան տանջանաց դատապարտուած են :
Վարձեալ խելքը մեզի կը սորվեցնէ
թէ սատանաներն ալ կրնան պատգամ-
ներ տալ թէ որ Լստուած իրենց թոյլ
տայ : Բայց ինչիրը այն է թէ արդեօք
Լստուած աս ազատութիւնս չնորհէր
է իրենց , որուն վըայ իրաւամբք կըր-
նանք տարակուսիլ : Եւ որովհետեւ
Սուրբ Վիրքը ամենեւին բան մը չըսեր
աս բանիս վրայօք , այսինքն թէ սատա-
նաները պատգամական գուշակութիւն
ներ կրնան ընել , անոր համար ազատ
ենք աս նիւթիս նկատմամբ մեզի հա-
ւանական երեւցած կարծեաց հետեիլ :
Լսենք կը խոստովանին թէ պատգա-
մը գերբնական բան մըն է . և ասոր
պատճառը այն է , որովհետեւ ներկայն
միայն յայտնի է մարդուս : Վրիստո-
նէութեան առաջին դարերուն մէջ կը
կարծուէր թէ պատգամները սատա-
նայից ձեռքովը կ'ըլլուէին . բայց աս
կարծիքս ընդունելի չէ այսօրուան օրս :

Վախճանիք ինչ որ բարի կամ չար ըսեր են խնդրոյ մը նկատմամբ՝ կրնայ իբրեւ կարծիք առաջ բերուիլ . ու թէ որ բանի մը պատճառը բաւական ցոյցերով չեն կրցած տալ աս տեսակ նիւթերու մէջ՝ պարզ իրենց հեղինակութեանն ու վըկայութեանը կը նայինք , ինչպէս որ իրաւունքը կը պահանջէ :

Յոնդրնէլ մի առ մի քննելէն վերջը այն պատճառները , որոնցմով նախնի քրիստոնեայք այդ կարծիքը ունեցան , այս հետեւեալ առաջարկութիւնները կը սկսի լուծանել :

Ա . (Թ) Է մեծապէս պէտք է տարակուսիլ պատգամներուն նկատմամբ պատմուած այն ամէն զարմանալի դէպքերուն վրայօք :

Բ . Հասարակաց՝ պատգամներու վըրայ ունեցած կարծիքը՝ չմիաբանիր կրօնքի մտածութեան հետ :

Գ . Հեթանոսք ինչպէս որ պէտք է նէ սատանայից չէին հաւտար :

Դ . Հեթանոսաց մէջի եղած գլխաւոր աղանդները մեծ բանի մը տեղ դրած չէին պատգամները :

Ե . Շատ մարդիկ , ինչպէս նաև փիլիսոփայք , հաւատք մը չէին ընծայեր պատգամաց :

Զ . Վոյն իսկ հին քրիստոնեայք ալ բոլորովին համոզուած չէին պատգամաց սատանայից ձեռքով ըլլալուն վրայ :

Է . Պատգամաց խաբէական ստութիւն մը ըլլալը , չէ թէ միայն քրմաց բացայայտ խոստովանութենէն կ'իմացուի , այլ նաև իրենց բանեցուցած միջոցներէն՝ որով պարզամիտ ժողովուրդը կը ջանային խաբել : Իսկ իրենց ստութեան յայտնի նշաններէն մէկն ալ այս է՝ որ դիւրաւ ախիներն ստակով կրնային որսացուիլ թէ՛ պատգամախօսներն և թէ՛ պատգամները : () րինակի համար , Վելիքեան պատգամախօսը միշտ յօգուտ Փիլիպպոսի գուշակութիւններ կ'ընէր . որով իրաւամբ տարակուսելով Վեմոսթենէս անոր վըրայ թէ Փիլիպպոսի հետ խօսքը մէկ ըրած ըլլայ , պատգամախօսին քրմակէ Փիլիպպոսի անունը դրաւ : Պատգամաց ստա-

կով որսացուելուն վըրայ կրնայինք շատ օրինակներ մէջ բերել , բայց աս հետեւեալս բաւական կրնայ ըլլալ : Վանի մը պատմագիրք կը պատմեն թէ Վելքեսանդր ուզէց բռնութեամբ Վրամազդայ Վմոնի որդի սեպուիլ , մէյ մը իր փառասիրութիւնը յագեցընելու համար , և երկրորդ՝ իր մօրը պատիւ մը ընելու դիտմամբ , որ միտքը դրած էր թէ Վրամազդէն աւելի նուաստ աստիճանի մարդ մը իրեն սիրահարած ըլլայ : Ետեանը երթալէն առաջ իր կամքը աստուծոյն իմացուց , և Վրամազդ ալ ամենայն սիրով իր խնդիրքը կատարեց : Վմոնք կ'ըսեն թէ քուրմերը մտածած ըլլան աս բանս , որպէս զի Վելքեսանդրի հաճոյական բան մը ընելով զինքը շողոքորթեն :

Պատգամատեղիք : — Հնարագիտութիւն քրմաց :

Յոնդրնէլ ըսածին նայելով՝ պատգամատեղիները աւելի լեռնային տեղերը կ'ըլլային , ուր որ անձաւներ ու քարայրներ շատ կը գտնուին . ինչպէս Ռեովտիա , որուն բնակիչքը ամենատգէտ մարդիկ էին , որով պատգամներու յարմար տեղ կը սեպուէր անձաւաց և տգիտաց պատճառաւ : Վասն զի մտքերնին դրած էին որ աստուածային ներշնչութիւն ունենալու համար պէտք է քարայրները քաշուիլ առանձնանալ . և ինչպէս որ յայտնի է՝ քարայրները ինքնին մարդուս վըրայ սարսափ մը ազդելով ռամկին սնոտիապաշտութեանը կ'օգնէին : Վելիքեան պատգամատեղին Պառնասոս լեռան կէս ճամբուն վըրան էր տափարակ տեղոյ մը վըրայ շինուած , ուր որ լեցուն վհեր ու անդունդներ կային , որ առանց արուեստի ալ ինքիւրեն ամուր ու անմատչելի տեղ մըն էր : Վերան վերի մասը գրեթէ թէ տարոնի մը ձև ունէր . և ան ժայռերուն մէջ մարդկանց աղաղակն և թմբուկներուն ձայնը ինքիւրմէ կը կրկնապատկուէր :

Երբոր պատգամախօս քրմուհին իր եռոտանոցն վըրայ կ'եւար , իբրեւ թէ

իր սրբավայրը, մուծ խաւարի մը մէջ
կը ծածկուէր, և պատգամ հարցնելու
եկողներէն բոլորովին հեռու կը կենար,
որոնք պզտի խցիկներու մէջ կը սպա-
սէին: Իսկ մուծ սրբատեղեաց դուռը
դափնիի տերեւով գոցուած կ'ըլլար, որ
պէս զի հարցնելու եկող անսուրբ ու
օտար մարդիկը ներսի եղածը չտեսնան:
Քրմաց ամէն մեքենաները այս սրբա-
տեղեաց մէջ պահուած էին, որոնց մէջ
գետնափոր ճամբաներով կը մտնէին:
Սրբատեղեաց մէջի շինուած կամարա-
կապ ու դատարկ տեղերը կը ծառայէին
ձայնը սաստկացնելով սարսափ մը ազ-
դելու ռամկին վրայ: Իսկ պատճառաւ
քերթողք քրմուհեաց ձայնը գերմարդ-
կային բան մը կը սեպէին. և շատ հա-
ւանական է որ քուրմերը թմբուկ և
փող ալ կը գործածէին: Սրբատեղեոյն
մէջէն և կամ տաճարին խորէն ախոր-
ժեւի շոգի մը կ'ելլար և բոլոր պատգամ
հարցնելու եկողներուն վրայ կը պա-
տէր: Քուրմք պատգամ տալու համար
մասնաւոր օր սահմանած էին և անոնց-
մէ դուրս ուրիշ օրերը չարագուշակ կը
սեպուէին: Երբոր ուղենային ժամա-
նակ վաստակիլ ու պատրաստութիւն
տեսնալ պատասխան տալու համար,
կ'ըսէին թէ պէտք է զոհ ընել, իմա-
նալու համար թէ արդեօք աստուածը
կամք ունի պատասխանելու, և այլն:
Պատգամները քրմուհեաց ձեռքովը կը
տրուէին, որոնք շատ անգամ երկգիմի
խօսքեր էին, ուսկից այլ և այլ իմաստ-
ներ կրնային հասկըցուիլ, և ասիկայ
ուղածնուն պէս կը մեկնէին դէպքե-
րուն համեմատ:

Պատգամք կնքեալ տումսակով:

Սրոնք՝ որ այս կերպով պատգամ հար-
ցնելու կու գային, կնքած տոմսակի
մը մէջ հարցմունքնին գրելով հարցու-
կին սեղանին վրայ կը դնէին: Արջը
մէկէն տաճարը կը գոցուէր ու տոմսա-
կը քուրմի մը կու տային, որ վրան պառ-
կելով՝ երազին մէջ պատասխանը կ'ըն-
դունէր: Եւայց շատ հաւանական է որ

քուրմերը վարպետութեամբ կը բա-
նային կնքած տոմսակը ու հարցմունքը
իմանալով դիւրաւ պատասխանը կը
յարմարցնէին: Սակայն թէ որ չկա-
րենային տոմսակը բանալ ու մէջի գը-
րուածը իմանալ, կրնային վարպետու-
թեամբ մը ուրիշներէ տեղեկանալ հար-
ցնողին միտքը ու հարցման պատճառը
և ըստ այնմ պատասխան մը տալ:

Պատգամք յերազի:

Իսկ տեսակ պատգամներուն մէջ
ամենէն երեւելին Տրոփոնիոսի ըսուածն
էր, որուն անձաւը մտնալէն առաջ
հարկ էր քանի մը օր պզտիկ խորանի
մը պէս տեղ մը կենալ, որ նուիրուած
էր Բաղդի և Ոգոյ. բոլոր աս միջոցս
շատ անգամ Երկինաս գետին մէջ կը
լուացուէին. տաք ջուրէ կը հրաժա-
րէին. զոհ կ'ընէին Տրոփոնիոսի, բոլոր
իր ընտանեացը, Եպողնի, Երամագ-
դայ, Կռոնոսի, Հերայի, և այլն. և
հոն զոհից մսերէն զատ ուրիշ բան չէին
ուտեր:

Նուիրաց փորոտիքը դիտելով կ'իմա-
նային քրմուհիք թէ արդեօք Տրոփո-
նիոս կը հաճէր որ այն անձը իր քարայ-
րը գայ՝ թէ ոչ. աստուծոյն աս հաճու-
թիւնը իմանալու համար նոխազ մը կը
զոհէին վերոյիշեալ խորանին վրայ:
Եթէ աղիքները բարեգուշակ ըլլային,
պատգամ հարցնողը գիշերանց Երկի-
նաս գետը կը տանէին, ուր տասուեր-
կու կամ տասուիրէք տարուան քանի
մը տղայք պատգամ հարցնելու եկողին
մարմինը իւղով կ'օծէին. վերջը նոյն
գետին աղբերականցը կը տանէին, ուր
որ երկու տեսակ ջուր պիտի խմէր. ա-
ռաջինն էր Ա եթեայ ըսուած ջուրը,
որուն համար կ'ըսէին թէ զօրութիւն
մը ունի մարդուս մտքէն հանելու կամ
ջնջելու ամէն տեսակ պիղծ և անսուրբ
մտածութիւնները. երկրորդն ալ էր
Ա՝ նեմոսինեայ ջուրը, որ իբրեւ թէ ա-
ռանձին յատկութիւն մը ունէր մտքին
մէջ տղաւորելու ինչ որ այն սրբազան
անձաւին մէջ կրնար մարդ տեսնալ ու

լսել, Մսնցմէ վերջը՝ զանհկայ Տրոփոսիոսի արձանին առջև կը տանէին, որուն դիմաց աղօթք ընէին ետքը՝ ասուեայ զգեստ մը հագած և սրբազան քօղով մը ծածկուած պատգամատեղին կ'երթար, որ լերան մը վրան էր ու ճերմակ քարերով շրջապատած, որուն բոլորտիքը պղնձի կոթողներով զարդարուած էին, և մէջտեղը անձաւ մը կար մարդկանցմէ քանդակեալ հնոցի նմանութեամբ. հոն անձուկ ծակ մը կար, ուսկից նեղ սանդխով մը վար կ'ինջեցուէր. անկէ վար ուրիշ անձաւ մըն ալ կար, որուն մուտքը խիստ նեղ էր։ Վետինն վրայ կը պառկէին, երկու ձեռքերնուն մէջ ալ մեղրախառն փոխինդ բռնած, ոտքերնին պզտիկ անձաւին ճեղքին մէջ կը դնէին և մէկէն սաստիկ ուժով և երագութեամբ ներս կը մղուէին։ Հոն ապագայն կը յայտնուէր իրենց, բայց ոչ ամենուն նոյն կերպով։ Սմանք կը տեսնային, ոմանք ալ պարզ կը լսէին։ Մնացէն դուրս կ'ելլային նոյն կերպով ինչպէս որ կը մտնային։ Սէկէն Սնեմոսինեայ աթուին վրայ կը նստեցընէին և ինչ որ տեսեր կամ լսեր էին կը հարցընէին։ Մնկից մէկէն Րազդի և Ոգոյ խորանը կը տանէին քանի որ դեռ ապշած ու իրենցմէ դուրս էին, ու հոն կամաց կամաց զգայութիւննին վրանին կու գար։ Հաւանական կը տեսնուի որ աս անձաներուն օդին նրբութիւնը կամ մէջերնէն ելած ածխային թթուութեամբ փոփոխութիւն մը կը պատճառէր հեթանոսաց բարոյական ու բնական կազմուածքին վրայ։ Մսնձաւիս մէջ ուրիշ ծածուկ անցք մըն ալ կար, ուսկից որ քրմերը տաճարը կը մտնէին։ Րսածնուս ճշմարտութիւնը հաստատելու համար աս դէպքը բաւական կրնայ սեպուիլ. անգամ մը Վետերիոսի հրամանաւր լրտես մը ինջաւ ան ծածուկ անձաւին մէջը, որպէս զի իմանայ թէ աւար առնելու բաներ կը գտնուին արդեօք. հոն ծածուկ զինքը մեռուցին, ու մարմինը անկէց հեռու գտնուեցաւ առանց սրբազան անձաւին

յայտնի ելքերէն դուրս հանելու։

Պատգամ հարցընելու եկող անսուրբ կամ պիղծ համարուած անձինքը օրերով սպասեցընել տալը, մեղաց քաւութեան և Տրոփոսիոսի հաճութիւնն ու կամքը իմանալու համար եղած զոհերը՝ ուրիշ բանի համար չէին, բայց եթէ փորձելու և իմանալու թէ պատգամ հարցընելու եկող անձը ինչ աստիճանի դիւրահաւան ու սնոտիապաշտ էր. որով մարդուն ունեցած միամտութեանն ու նախապաշարմանը համեմատ կամ թող կու տային որ պատգամ հարցընէ, և կամ կը մերժէին ըսելով՝ որ Տրոփոսիոս զքեզ չուզէր. և ասիկայ քուրմերուն վարպետութիւնն էր։

Կը շարունակուի։

Ճանապարհորդութիւն Պողիկտետի ի Հռովմ։

ԹՈՒՂԹ Է.

(Տես երես 86)

“Ահա հասանք վերջապէս Էսկուփիւնեան դուռը։ Տես այն բազմութիւնն որ Հռովմայ սահմանին արեւելեան կողմերէն կու գայ։ Բան մը չկըր. նար քեզի աւելի լաւ կերպով գաղափար մը տալ այս քաղաքին ժողովրդեան անհուն բազմութեանը, բայց եթէ ան ամէն տեսակ պաշարի առատութիւնը, որ մի և նոյն ատեն ամէն դռներէն քաղաքը կը մտնեն, և հասնելուն պէս տնայտ կ'ըլլան։ Հոս չորս եզով լծած մեծ սայլեր՝ ցորեն, գարի և ամէն տեսակ ընդեղէն կը բերեն. հոն երկայն բարակ շարք մը առանց անսկի կառքեր մէկ ձիով մը լծուած, և համեմատական կերպով շարուած ստուգներով բեռնաւորած են. անդին աղքատ քաղաքացի մը իրեն մէկհատիկ գերոյն իր պարտիզին բանջարեղէնները կառքի մը վրայ քաշել կու տայ, որ կ'ըսուի Բաւիւ։ Ամէն գին գործունէութիւնն ու ճարտարութիւնը կ'եռան իրական կամ երեւակայական պիտոյքները լեցընելու համար. հարուստը աղքատին տշխատանքը կը վայելէ, որուն տպուածն ալ ինքը կը հոգայ, և այս փոխադարձ առուտութիւնը ընկերական կարգը կը շահի։

» Բայց աւելի նշանաւոր առարկաներ առջև նիս կ'ելլեն։ Դիտէ սա փառաւոր ջրմուղը որ առջինը եղած է Հռովմայ մէջ. Ապպիոս Կղզիոս համարակալը Ապպիան ճամբան շինողն է որ աս ալ շինէր է 442 տարւոյն, որպէս զի այս մեծ քաղաքին պիտոյքը դիւրացընէ, որն որ անդադար մեծ նաւովը հեռագէտէ Տիբերիսէն կը հեռանար։ Այս